

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՐՔԸ ԴԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
21 հոկտեմբերի 1999 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հոկտեմբերի 1999 թվականի N 657

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՐՔԸ ԴԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի դեկտեմբերի 30-ի N 626 կգ որոշմամբ հաստատված հրահանգի 1.5-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում օբյեկտները հատուկ կարևոր օբյեկտների շարքը դասելու կարգը (կցվում է):
2. Հայաստանի Հանրապետության նախարարություններին ու գերատեսչություններին՝ մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարություն ներկայացնել առաջարկություններ իրենց համակարգի կազմակերպությունները հատուկ կարևոր օբյեկտների շարքը դասելու վերաբերյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

Վ. Սարգսյան

Հաստատված է
ՀՀ կառավարության 1999 թվականի
հոկտեմբերի 21-ի N 657 որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԵՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՇԱՐՔԸ ԴԱՍԵԼՈՒ

1. Հատուկ կարևոր օբյեկտների շարքն են դասվում այն պետական օբյեկտները (բացառությամբ ռազմական օբյեկտների), որոնք բնակչության կենսաապահովման առումով և պետության բնականոն կենսագործունեության տեսանկյունից ունեն բացառիկ նշանակություն, ինչպես նաև բարձր վտանգավորության օբյեկտները, որոնց գործունեության խափանումը կարող է հանգեցնել բնակչության և շրջակա միջավայրի համար անկանխատեսելի հետևանքների:
2. Պետական կառավարման մարմիններն իրենց համակարգի օբյեկտները հատուկ կարևոր օբյեկտների շարքը դասելու վերաբերյալ առաջարկությունները սահմանված կարգով ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարություն:
3. Նշված առաջարկությունները ներկայացվում են գաղտնագրված և հիմնավորված ձևով՝ ընդգրկելով օբյեկտների հիմնական գործունեությանը վերաբերող անհրաժեշտ տվյալները:
4. Ներկայացված առաջարկությունների համակարգումը, հատուկ կարևոր օբյեկտների ցանկի նախագծի մշակումը, սահմանված կարգով շահագրգիռ պետական մարմիններում նշված նախագծի համաձայնեցումն իրականացնում և այն Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարությունը: